ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՈՐՈՏ» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/36 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	«ՈՐՈՏ» ՍՊԸ	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար պետք է տրամադրվեն և փողոցներում տեղադրվեն 20 /քսան/ հատ աղբաման: Աղբամանները պետք է լինեն համաձայն կից ներկայացվող լուսանկարի, ստորև ներկայացվում է լուսանկարը: Աղբամանների գույները, և այլ մանրամասներ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աղբամանները պետք է լինեն չօգտագործված և պատրաստված լինեն նոր /չօգտագործված/ նյութերով: Աղբամանի հետ պետք է տրամադրվի մեկ հատ պահեստային դույլ: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Աղբամանների տեղափոխումը և տեղադրումը պետք է իրականացվի մասնակցի միջոցների հաշվին: Աղբամանները պետք է տեղափոխվեն և տեղադրվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում: ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ Աղբամանը պետք է պատրաստված լինի մետաղական հիմքի վրա հետևյալ չափերով. Աղբամանի ընդհանուր բարձրությունը հատակից 650 մմ: Վերևի ձագարաձև հատվածի վերինմասի տրամագիծը Φ 450մմ, իսկ ձագարաձև հատվածի ներքևի մասի տրամագիծը Φ320 մմ, ձագարաձև հատվածի բարձրությունը 150մմ: Աղբամանի ներքևի հատվածի տրամագիծը 320մմ, բարձրությունը մինչև

		ձագարաձև հատվածը 500մմ: Վերևի ձագարաձև հատվածի վերին մասը պատրաստված է Φ16 մմ մետաղական խողովակից գլանված Φ 450 մմ տրամագծով, գլանված հատվածի ծայրերի միացումը եռակցման միջոցով է, մեկ եռակցման մասով և լավորակ մշակված: Աղբամանի պատերի 40x3 մմ մետաղական ժապավենը, առանց կտրվածքի /ամբողջական/ եռակցվում է Φ 16 մմ տրամագծով գլանված հատվածին և Φ450մմ տրամագծով ձագարաձև հատվածի վերին հատվածին, պետք է միացման կետերն ու եռակցված հատվածները լինեն լավորակ մշակված, Φ320 մմտրամագծով մասում ժապավենի հեռավորությունը մեկը մյուսից 17–18 մմ: Աղբամանի ստորին հատվածը որտեղ զոդված են 40x3մմմ ետաղական ժապավենը պետք է փաթաթված լինի 50x3մմ մետաղական ժապավենով ինչպես նկարում: Աղբամանի կափարիչը պետք է ամրացված լինի աղբամանին մետաղական շղթայով, իսկ աղբամանի կափարիչի անցքը Φ 150 մմ :Աղբամանի կափարիչը պետք է պատրաստված լինի 1.8-2մմ մետաղական թիթեղից և հաստությունը ապահեվելու համար աղբամանի կափարիչի արտաքին մասով պետք է փաթաթվի 20x3մմ կամ 25x3մմ մետաղական ժապավենով, իսկ կափարիչի անցքի Φ 150 մմտրամագծով պետք է փաթաթվի 10x10մմ մետաղական խողովակ եռակվման միջոցով: Աղբամանի մեջ տեղադրված է ցինկապատ մետաղական թիթեղից պատրաստված դույլ պետք է պատրաստվի 0.4–0.5 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով, պատերին լինեն անցքերΦ 10մմ, ունենա բռնակ, վերևի հատվածը՝ բռնակի ամրացման մասը ուժեղացված: Աղբամանը ներկել գրունտով, այնուհետև վերջնական լավորակ ներկով: Աղբամանը ամբողջությամբ մետաղական է, բոլոր մետաղական դետալները ամրացվածեն եռակցման միջոցով և բոլոր եռակված մասերը պետք է լինեն հղկված: Աղբամանը ունի 3 անցք գետնին ամրացնելու համար: Աղբամանները պետք է ունենան առնվազն 1 տարվա երաշխիքային սպասարկում: Աղբամանները մատակարարվում են փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ՈՐՈՏ» ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/36 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		